ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Երկու հազար տասնյոթ թվականի օգոստոսի տասնվեցին կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակ նոտարական տարածք
Երկու հազար տասնյոթ թվականի սեպտեմբերի յոթին:

Քաղաքացի **Գոռ Սերյոժայի Սահակյանը** (ծնված 05.04.1991թ., անձնագիր՝ AR0374691, տրված 052-ի կողմից 14.07.2017թ., փաստացի բնակվող՝ ք. Սպիտակ, Քըրք Քըրքորյան փող., տնակ 65/1 հասցեում), այսուհետ՝ **Վարձատու,** մի կողմից և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության "Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ" պետական կառավարչական հիմնարկը (գտնվելու վայրը՝ ք. Երևան, Նալբանդյան 13) ի դեմս ծառայության աշխատակազմի ղեկավար Մինաս Մինասյանի, ում անունից հանդես է գալիս լիազորված անձ, Ծառայության աշխատակազմի Սպիտակի սոցիալական ապահովության տարածքային բաժնի գլխավոր մասնագետ **Թեհմինե Վանիկի Գասպարյանը** (ծնված 24.08.1980թ., նույնականացման քարտի համարը՝ 006563076, տրված 052-ի կողմից 28.08.2015թ., հաշվառված՝ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Առափնյա փող., տ. 30 հասցեում), որը գործում է երկու հազար տասնյոթ թվականի սեպտեմբերի վեցին տրված N **ՄՄ/13668-17** լիազորագրի հիման վրա, այսուհետ՝ **Վարձակալ**, մյուս կողմից, ի լրումն երկու հազար տասնյոթ թվականի օգոստոսի տասնվեցին կնքված, և Հայաստանի Հանրապետության Սպիտակի նոտարական սեղանամատյանում 1476 համարով գրանցված, ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

Պայմանագրի 3.3 կետից հետո լրացնել հետևյալ 3.4 և 3.5 կետերով.

3.4 Վարձակալը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Վարձատուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.5 Եթե պայմանագրի 3.4 կետով սահմանված ժամկետում Վարձակալը չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Վարձակալը Վարձատուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

Պայմանագրի 5.6 կետից հետո լրացնել հետևյալ 5.7 և 5.8 կետերով.

5.7 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վարձատուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վարձատուին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Վարձակալը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Վարձակալը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վարձատուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վարձատուն պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Վարձակալի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

5.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել՝ նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Պայմանագրի 8.7 կետը թվագրել 8.8 կետով և լրացնել նոր 8.7 կետ հետևյալ բովանդակությամբ.

8.7 ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ առաջացնող գնումների դեպքում պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է այդ գործարքի՝ լիազորված մարմնի կողմից հաշվառված լինելու հանգամանքը՝ բացառությամբ 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ցուցակի 1-ին, 2-րդ, 3-րդ, 13-րդ, 14-րդ, 19-րդ և 21-րդ կետերով նախատեսված գնումների:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Վարձակալ	**Վարձատու**
ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊ ծառայություն ք.Երևան Նալբանդյան 13 Հ/Հ 900011556355 ՀՎՀՀ 02505511 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ աշխատակազմի ղեկավար Մինաս Մինասյանի լիազորած անձ՝ Սպիտակի ՍԱՏԲ-ի գլխավոր մասնագետ Թեհմինե Վանիկի Գասպարյան (նույնականացման քարտ 006563076, տրված 28.08.2015, 052-ի կողմից) (ստորագրություն)	Քաղաքացի Գոռ Սերյոժայի Սահակյան (անձնագիր AR0374691, տրված 14.07.2017թ., 052-ի կողմից), բնակության հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, ք.Սպիտակ Քրոք Քրոքորյան 65/1 տն. Արարատբանկ ԲԲԸ Սպիտակի մ/ճ Հ/Հ 1510020569020200

Նոտարական ակտի կոդ: 504-20170907-88-1698267
Նոտարական ակտի գաղտնագիր: 09U5EF

Վավերացման մակագրություն կնքված պայմանագրի վրա

Երկու հազար տասնյոթ թվականի սեպտեմբերի յոթին:
Սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ Հայաստանի Հանրապետության Սպիտակ նոտարական տարածքի նոտար Վաչիկ Մաթոսյանիս կողմից:
Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ:
Կողմերի, նրանց ներկայացուցիչների ինքնությունը, գործունակությունը և իրավունակությունը ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում N 1635

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար երկու հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Վաչիկ Մաթոսյան